

ԶՐՈՒՅՑՆԵՐ
ԽԱՐՈՒՅԿԻ ՇՈՒՐՋԸ



ԱՆԴՐԵՅ ՊՏԱԽԱՆ
ՅԵՎ ՎԱՍԻԼՅՈՎԸ

(Մ ՍՍՏ «ՓՈԹՈՐԿԱՇԻՆՆԵՐԸ» ՎԵՊԻՑ)

ՊԵՏՅՐԱՏ

20024

6/17

6259

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԽԱՐՈՒՑԿԻ ՇՈՒՐՁԸ .

ՆԻԿ. ՈՍՏՐՈՎՍԿԻ

ԱՆԴՐԵՅ ՊՏԱԽԱՆ ՅԵՎ ՎԱՍԻԼՅՈՎԸ

(ՄԻ ՀԱՏՎԱԾ «ՓՈԹՈՐԿԱԾԻՆՆԵՐԸ» ՎԵՊԻՑ)

20024

Թարգմանեց
Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

A I
8343



ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՈՍԱՆԵԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937

Պատ. խմբագրելը՝ ՀՐ. Կ Ո Թ Ո Ղ Յ Ա Ն
Տեխ. խմբագրելը՝ ԱՆ. Գ Ա Ս Պ Ա Ր Յ Ա Ն
Սրբագրելը՝ Ա. Ա Ր Զ Ա Ք Ա Ն Յ Ա Ն

Քլավկոսի լիագրը՝ Խ . 9240 Հրատար. 4189
Պատվեր 958, Տիրատ 1500
Պետհրատի ապարան, Յերևան, Լենինի, 65

Անդրեյն իր լերկաթե կեռերը դցեց դռան վրա և իր լինդը մտցրեց դռների բռնակներին մեջ ու կրկին բռնեց օղակից: Կրկին ողբ ճեղքելով վռնաց բռթաբեր շչակը, ընդհատ-ընդհատ, սարսափելի... Նա ստիպեց քաղաքի բոլոր մարդկանց դուրս վազել փողոց: Նա բիզ-բիզ կանգնեցրեց դործարանատեր Բարանկեվիչի ցանցառ մազերը: Նա ստիպեց կապիտան Վրոնային դունատվել, իսկ ժանդարմ Չերեկին՝ գողգողալ: Բանտում լարված ուշադրությամբ լսում էին այդ մռնչյունը: Գերմանական եշելոնից զինվորները դուրս թռան և իրենց չորս կողմը նայեցին: Իսկ շչակը շարունակում եր վռնալ...

Հնոցատան դուռը կտորում էին պահնորդականները: Սակայն լերկաթապատ հաստ դուռը միայն ցնցվում եր նրանց հրացանի կոթերի գարկերից:

— Սահդուխք բերեք, մարշ դեպի պատուհանները: Կրակիր նրա վրա, — գոռում եր կապրալը*) պահակախմբին:

Անդրեյը վտանգի մասին իմացավ միայն այն

*) կապրալ — լեյնթասպա:

ժամանակ, չերբ պատուհանից պալթեց կրակոցը
և գնդակը սուլեց նրա գլխի մոտով:

Նա ակամա բաց թողեց ողակը: Մռնչոցը լը-
ռեց: Նոր կրակոցից փրկվելու համար, Անդրեյն
ածուխի փոսը մտավ:

Հրացանն առաջ մեկնած, պատուհանից գը-
լուխը ներս կոխեց լեզիոները: Պտախան ած-
խի փոսում պատեպատ եր ընկնում, ինչպես
բռնված մուկը: Նա զգում եր, վոր իր կազմա-
կերպած խռովության վերջը հասնում ե: Նրան
հուսահատութուն պատեց:

Պատուհանը նեղ եր և լեզիոները դժվարու-
թյամբ անցնում եր նրա միջով՝ մշուտով: Նրան
չտեպից հրում ելին: Այն ժամանակ Անդրեյը
վերցրեց մի կտոր անտրացիտ և մահն աչքն
առած դուրս յեկավ փոսից: Ամբողջ ուժով անտ-
րացիտը նետեց պատուհանը: Ածուխը գլպավ
լեզիոների չերեսին: Նա հրացանը ցած գցեց,
գլորվեց և ընկավ ներքևից պահողների ձեռ-
քերի վրա: Հրացանը զրնգոցով ընկավ հնոցա-
տան ցեմենտի հատակի վրա: Նորից հրացան
պալթեց: Անդրեյն ուրախութունից խենթացավ:
Նա քարածուխով ոմբակոծում եր պատուհանը:

Պատուհանի չետևից վայրի հայհույանքեր ելին
լսվում: Մարդիկ սանդուխքից արագ գետին ելին
սահում:

Անդրելը կատաղեց: Նա գոտին արձակեց և նրանով ողակը կապեց ճնշման կարգավորիչին: Շչակը նորից մոնչաց, բայց արդեն վոչ ընդհատ - ընդհատ, վորովհետև Պտախան փոկը ամրացրել էր:

Այժմ Անդրելի ձեռքերն ազատ էլին: Հանկարծակի գալուց վախենալով, նա անընդհատ պատուհանից ածուխ էր նետում:

Կռվի տաք ժամանակ Պտախան մոռացել էր, վոր հնոցատունն էլի լերկու պատուհան ունի: Միայն լերբ լերկու փակ պատուհաններից ապակիները թռան և պատերի սվաղը թափվեց, Անդրելը վշտանալով հասկացավ, վոր լերբք պատուհանից կռվել չի կարող: Գնդակները նրան կրկին ածխի փոսը քշեցին:

Մի պատուհանից հրացանի փող լերկաց: Անդրելը մոլեգնաբար աջնտեղ քար նետեց: Սակայն մյուս պատուհանի կրակոցն ստիպեց նրան լեռ դառնալ:

— Այ, հիմա վերջս հասել է, — ասաց Անդրելը և քիչ մնաց վոր լաց լինի: Անդրելի արիութունը թուլանում էր:

Նա միանգամից ծանր հոգնածութուն զգաց: Յեվ, արդեն հրաժարվելով ընդդիմադրութունից, նստեց ածխափոսի մի անկյունում: Մի բան նրա կողքին դիպավ: Պտախան ակամա վերցրեց

այլ առարկան: Դա հրդեհաշեջ խողովակի ծայրն
եր, վորով հնոցպաններն ոգտվում ելին ածուխ
թրջելու համար:

Նրա հոգնած գիտակցության մեջ մի ինչ վոր
բան փալկեց:

— Ան... դուք կարծում եք թե ինձ արդեն
բռնել եք, սողուններ, իսկույն կտեսնենք, —
գոչում եր նա, թեև նրան, խելագար մոնչոցի
պատճառով, վոչ վոք չեր լսում:

Անդրելը կատաղի կերպով պատեցնում եր
անիվը, վորը ջուր եր մղում դեպի խողովակը:
Գոլորշին սուր շաչոցով դուրս եր գալիս ջրհան
մեքենայից: Դրանից հետո սկսեց դուրս գալ
տաք ջուր: Ածխի փոսը գոլորշիով լցվեց: Անդ-
րեցն ել շնչել չեր կարողանում: Դողացող ձեռ-
քերով նա բռնեց ջրհան մեքենան և մատներն
այրվելով, նեղվելով տաք ջրի կաթիլներից, լե-
ռացող ջրի շիթն ուղղեց դեպի հնոցատունը:

Յեվ արդեն չմտածելով այն մասին, վոր նրան
կարող են սպանել, շիթերն ուղղեց դեպի պա-
տուհանները... Նա ուրախությունից վայրենու-
նման պար եր գալիս, լսելով, թե ինչպես են
վռնում պատուհանների լեռեից: Այժմ, նա, կաթ-
սաների միջև նստած, շարժում եր ջրհան մե-
քենան և լեռացրած ջուր ցանում պատուհան-
ներից:

Նրա սիրտը կարծես դուրս եր թռչում, ասն-
քան ուժեղ եր բաբախում: Վողջ հնոցատունը
ջրով լցվել եր: Հատակի վրա լեռացած ջուր եր
թափվում: Մնդրելը շնչել չեր կարողանում, ձեռ-
քերն այրում եր, սակայն անելանելի դրուժյան
գիտակցութունն ստիպեց նրան շարունակել ընդ-
դիմադրութունը:

Մռնչոցը տարածվել եր վողջ քաղաքում:

Վասիլյովը գործարան լեկավ բանվորների ա-
ռաջին խմբի հետ, վորոնք հերթափոխության
ելին լեկել: Նա ուզում եր, ինչ ել վոր լինի,
առաջինը պատմելիը լեղբորը, թե ինչպես սպանե-
ցին հորեղբայր Սերեգային, իրենց հարեվանին:

Վասիլյովը հաճախ եր գալիս գործարան լեղ-
բոր մոտ, մինչև անգամ աշխատանքի ժամանակ,
զգուշ անցնելով բանվորների միջից, խուսա-
փելով պահակներին հանդիպելուց: Հաճախ նա
աշխատանքի վողջ ժամանակամիջոցում լեղբոր
հետ գտնվում եր հնոցատնում, աշխատելով ոգտա-
կար լինել նրան: Հնոցպանը սիրում եր այս
ճարպիկ տղային, վորը շուտով սովորեց հնոց-
պանի արեստը:

Մի անգամ նա պան Ստրումելի աչքովն ընկավ,
սակայն հնոցպանները նրան պաշտպանեցին և
փականագործը ձեռքը թափահարեց: Յերեխան
ոգնում եր հնոցպաններին ամխի վազոնները

դատարկելիս, գիտեր հնոցատան բոլոր ծակու-
ծուկը՝ և շուտով հարմար անցք գտավ դուրս
գալու համար, վորի միջով անցնում եր հնոցա-
տունը, աննկատելի մնալով դռների մոտ կանգնած
բոլոր հսկիչներից: Մտնում եր ածխի բակը,
ողավիօխող լաջն խողովակը, վորի միջով իջնում
եր աղբահորը, ուր թափում ելին ածխի մնա-
ցորդները: Իր գաղտնիքը Վասիլյուկը վոչ վոքի
չեր հայտնում, մինչև անգամ լեղբորը, նրա
համար հաճելի լեր անսպասելի կերպով հայտն-
վել, վոր հնոցականները զարմանան նրա ճարպ-
կության վրա:

Վասիլյուկը սարսափեց, լերբ իմացավ, վոր
Անդրեյը փակվել եր հնոցատնում և վոր նրան
ուզում են սպանել: Յերեխան մարվող սրտով
հետեվում եր լեզիոներներին հնոցատունը մտնե-
լու փորձերին:

Յերբ այդ փորձը ձախողվեց, նրա ուրախու-
թյանը չափ չկար: Վասիլյուկը բանվորները մեջ
դես ու դեն եր ընկնում, նայելով նրանց աղեր-
սող, արտասուքով լիքն աչքերով և հարցնում
եր ծանոթ հնոցականներին.

— Ասացեք, հորեղբայր, նրան ի՞նչ կանեն:
Հնոցականները խոժոռած լսում ելին: Իսկ
մեկը նրա ձեռքերից բռնեց և մի կողմը տարավ:

— Փախիր այստեղից, քանի կենդանի լես: Մեկն արդեն ձեռնվել է... թե ուզում ես, վոր քո գլուխն ել ուտեն: Վասիրյոկը հիացավ նրանից: Հեկեկալով նորից վազեց տեսնելու, թե ինչ են անում լեզիոններները:

Հնոցատանը կատարվող դեպքերը դիտում ելին գործարանի բակում գտնվող բանվորները:

Զինված լեզիոններների դեմ միայնակ պալքարող փոքրիկ հերոսի հուսահատ դիմադրութլունը հուզեց բանվորների սիրտը:

Մուսլված ծանր աշխատանքից տանջված մարդիկ իրենց համար նախատինք ելին համարում այն: Յեվ մռնչոցը չէր թողնում վոր այդ մասին մի բոպե մոռանան: Այժմ Պտախայի վիճակը բոլորին սաստիկ հուզում էր: Նրանով Բացե ի բաց հրճվում ելին, հատկապես կանայք:

Հավեցին վրդովված ձայներ.

— Գոնե ամաչեցեք նայելուց, տղամարդիկ: Մենակ թողել էք, վոր մեռնի... կանանց կաներին և այդ տեսարանից հուզված բանվորները հրաժարվում ելին հեռանալ բակից: Հեծյալները ձեռքով նեղում ելին նրանց և մտրակում:

Գրգռված բանվորները մի ձիավորի ձիուց ցած բերին: Հազիվ կարողացան նրանց ձեռքից լսել ձիավորին:

Զարեմբայի եսկադրոնը մեծ դժվարութլամբ էր բակը մաքրում:

Վասիլյովին իր համար տեղ չէր գտնում: Այդ անհանգիստ փոքրիկին լեզբի տներն արդեն նկատել էին:

— Ե՛յ, դու: Ի՞նչ ես ուզում: Կանգնիր: Ո՞ւր ես վազում, — գոչեց նրանցից մեկը:

Վասիլյովը մտավ ամբոխի մեջ և արմունկներով ու գլխով ճեղքելով մտավ նրանց խորքը: Վախենալով իրեն բռնելուց, նա գնաց քարածուխի պահեստը և այնտեղ միայն հիշեց իր դուրս գալու տեղի մասին:

Հասնելով քարածուխի փոսին, Վասիլյովը լերկար ժամանակ սողում էր ածխի վրայով, քարերը դիպչում էին ծնկներին ու գլխին և ցավ պատճառում: Դուրս գալու տեղ էր վորոնում, բայց չէր գտնում: Նոր բերած ածուխը թափվել էր նրա վրա: Այն ժամանակ լերեխան սկսեց ածխի կտորներն այս ու այն կողմը հրել: Մեծ կտորներից մեկը դիպավ նրա բոբիկ վոտներին: Վասիլյովին ընկավ և լերկար ժամանակ լաց էր լինում: Քիչ անցած, նա նորից գործի անցավ: Մի փոքրիկ փոս փորեց, բայց ածուխը ցիրուցան անելը գնալով դժվարանում էր: Ստիպված էր ածուխը վերև կրել և դեն ածել, վոր գլխին չթափվի: Ածուխի փոշին լցվում էր նրա քիթն ու աչքերը: Նա փռշտում էր ու թքում: Բայց ածուխը չէր վերջանում: Վասիլյովը նկա-

տեց, վոր ինքը բոլորովին ալ անցք է փորում:
Նա սարսափեց և ելի լաց չեղավ:

— Անդրեյ, Անդր-յուշ-կա, — գոչեց նա ամ-
բողջ ուժով:

Անդրեյը վեր թռավ, կարծես նրան ոձ կծեց:
— Թ'ո՛ւ, սատաննա:

Նրան թվաց թե վասիլյոկը լաց եր լինում:
Պտախան կանգնած եր քարածխի փոսում
հրացանը ձեռքին և աչքը պատուհանից չեք
հեռացնում:

Ջրհան մեքենան ընկած եր նրա կողքին: Գո-
լորշին, վորը քիչ եր մնում խեղդեր նրան, պա-
տուհանից կամաց դուրս եր գալիս:

Անդրեյին չերբեմն թվում եր, թե այս ամենը
մի ծանր լերազ է: Արդեն չերեք ժամ անցել եր,
բայց նրան ոգնող չկար: Շուտով նրան կբռնեն
և կգնդակահարեն: Բոլորը մի կողմը քաշվեցին.
միայն Պտախան պիտի մեռնի...

— Անդրյուշկա, — բոլորովին մոտիկ տեղից
գոռում եր վասիլյոկը:

Վերեվից մի քար ընկավ Անդրեյի ուսին և
ցավեցրեց: Դրանից հետո ուրախ ձայն լավեց.
«Յես եմ, վասկան»: Այդ ձայնը լետ պահեց Անդ-
րեյին կրակելուց: Անդրեյը սարսափեց այս
մտքից: Իսկական, կենդանի վասիլյոկն իջավ
նրա մոտ:

— Անդրբլուշա, լես եմ... Ելի շատ լեկան...
Ամբողջ բակը լիքն է... փախիր այստեղից:
Այստեղ անցք կա: Յես ամեն անգամ այնտեղից
եմ մտել: Միայն թե այժմ ածուխ են լցրել,
չկարողացա դուրս գալ, — գոռում է Վասիլյուկը
լեղբոր ականջին, գրկելով նրան:

— Վորտեղի՞ց մտար այստեղ:

— Ածխի բակից:

— Այնտեղ անցք չկա:

— Իսկ լես խողովակով մտա: Խողովակը լախ
է: Դու լել կարող ես անցնել: Գնանք, Անդրբլու-
շա, գնանք: Ոստապ հորեղբայրն ասում է, թե
նրանք քեզ կսպանեն: Ներս սողա, իսկ լես քո
լետեից:

Վասիլյուկը վերև մագլցեց: Պտախան մի ան-
գամ ել նայեց հնոցատանը: Վասիլյուկն արդեն
այնտեղ սպասում էր նրան: Անդրեյը տվեց նրան
հրացանը: Հետո մտավ անցքը և ձեռքով թափ-
վող ածուխները բռնելով, մագլցեց վերև: Վա-
սիլյուկը շտապեցնում էր նրան: Անդրբլուշան
վերջրեց մի ծանր քար և անցքի մեջ գցեց:
Տղան ոգնում էր նրան, վտտներով ու ձեռքե-
քով ածխի կտորներ լցնում այնտեղ: Մի բոպե-
լից հետո անցքը փակված էր:

Վասիլյուկը Անդրեյին տարավ իր ճանապարհ-
ներով: Պտախան սարսափով մտածում էր, թե

ինչ կլինի լեթե ողափոխութեան խողովակով
չկարողանար անցնել: Մեծ թեթեւութուն ստա-
ցած նա ազատ շունչ քաշեց, լերբ Վասիլյոկից
հետո գլուխը և ուսերը ներս տարավ և սկսեց
կամաց առաջ շարժվել:

Յերբ նրանք հասան վերև, բարակ անձրև եր-
գալիս: Ածխի բակը գործարանի հիմնական մա-
սից դուրս եր, վորից նա բաժանվում է բար-
ձրը քարե սլատով:

Վասիլյոկը զնաց հետախուզութեան: Շուտով
նա վերադարձավ և հայտնեց, վոր ճանապարհի
վրա վոչ վոք չկա:

— Յերկաթգծերի վրա լերբք շարք դատարկ վա-
զոններ կան: Վազոնների տակից կարելի լե անց-
նել և վոչ վոք չի տեսնի: Յետեվի դարպասի
մոտ վոչ վոք չկա: Փակ է: Մենք կբարձրա-
նանք վագոնի վրա, վագոնից դարպասի վրա
և հարգա, դեպի դաշտը, — ասում եր Վասիլյոկն
Անդրեյի ականջին:

Նրանք ածխաբլրից իջան և կռացած վա-
զեցին վագոնների միջով: Վասիլյոկի սլանը հի-
անալի դուրս լեկավ: Վերջին վագոնը դարպա-
սի մոտ եր: Նրանք անցան լերկաթե ճաղերով
դարպասը և սկսեցին վազել լերկաթուղու ճա-
նապարհով:

Վասիլյոկը թռչում եր առջևից, վորպես

Թուշուն, յերկու մետրանոց թուիչքներ կատարել-
լով: Նա հաճախ լետ եր նայում, վոր տեսնի
հասնում ե արդյոք լեղբայրը: Անդրելը վազում
եր ամբողջ ուժով: Անդրելը հրացանը դեն չգցեց:

«Միենուչն ե, կսպանեն, լեթե բռնեն: Իսկ այս
կերպ մի յերկուսին կսպանեն», — մտածում եր
նա, դեռ չհավատալով, վոր փրկված ե: Յեվ
միայն այն ժամանակ, լերը դործարանը մնաց
հեռվում, Անդրելը կանգ առավ և ուժասպառ
գետնին նստեց:

— Կանգնիր, Վասիլյոկ, ել շեմ կարողանում,
— գոչեց նա և ձեռքը դրեց սրտի վրա:

— Փախիր, Անդրյուշա, փախիր թե չե կհասնեն:
Յերկյուղով դես ու դեն նայելով, նա վեր
ցատկեց: Սաստիկ թրջված, ցրտից ու յերկյու-
ղից կուչ եր գալիս: Կեղտոտ ու բորբիկ վոտները
սառել ելին:

— Բավական ե, Անդրյուշա, վաղենք: Ան-
դրելը վեր կացավ: Այնտեղից, վորտեղ խիտ
մառախուղի մեջ կորել եր դործարանը, շչակի
ձայն եր լսվում:

— Շաշում ե, — հպարտությամբ շշնջաց նա...
Յեվ ել չվազեցին, ալլ գնացին արագ քայլերով:
Պտախան տեսավ ծանոթ տնակը և այժմ
միայն հավատաց, վոր փրկվել ե:

— Վասիլյոկ, լեղբայր, Վայսկա: Հիմի արդեն

Թքել ենք մենք նրանց վրա:

Նա գրկեց լեղբորը, սեղմեց կրծքին: Վոչ վոք
չնկատեց թե ինչպես վերևից թափով անձրևի
հետ գետին ելին ընկնում չերկու չեղբայրները
սուք արցունքները:



A^I8343

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045198

ԳԻՆԸ 45 4

(054)

89

A $\frac{1}{8343}$

Н. ОСТРОВСКИЙ
Из „Рожденные бурей“
АНДРЕЙ ПТАХАН
И ВАСИЛЬЕК
Гиз Арм. ССР, Ереван, 1937